# ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

**ՀՀ,ք.Ալավերդի,երկու հազար յոթ թվականի սեպտեմբերի քսանչորսին**

Մի կողմից՝ՀՀ Պաշտպանական մարզատեխնիկական հասարակական կազմակերպության /ՀՀ ք.Երևան Արշակունյաց պող.5/ Կենտրոնական խորհուրդը՝ ի դեմս նախագահ Գեներալ-Մայոր Ա.Ի.Թադևոսյանի,որը գործում է կանոնադրության համաձայն, այսուհետև «ՎԱՐՁԱՏՈՒ»,որի անունից 04.09.2007թ. տրված No 02/94 լիազորագրով հանդես է գալիս «Թումանյանի Հայրենասեր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը/ՀՀ , Լորու մարզ,Ք.Ալավերդի,Երևանյան շճ 5/ ի դեմս տնօրեն Գառնիկ Արամայիսի Իսրայելյանի,անձնագիր AC 0615613 տրված 03.02.1999թ. 055 ՆԳԲ,բնակվող Լոռու մարզ ք.Ալավերդի Կոմսոմոլի 197 բն.5, և մյուս կողմից ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը /ՀՀ, ք. Երևան-10 Կառավարական տուն 3/ ի դեմս աշխատակազմի Ղեկավար՝ Ջ.Մարգարյանը, որը գործում է կանանադրության համաձայն, այսուհետև «ՎԱՐՁԱԿԱԼ»,որի անունից 24.07.2007թ. տրված No 27 լիազորագրով հանդես է գալիս ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն «Զբողվածության պետական ծարայություն» գործակալության Ալավերդու ՋՏԿ-ի տնօրեն Նունե Վրթանեսի Անտաշյանի, որը գործում է կանոնադրության համաձայն, անձնագիր AE 0383159 տրված 23.04.1999թ. 055 ՆԳԲ, բնակվող ՀՀ ք.Ալավերդի Կոմսոմոլի 117, միմյանց միջև կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

## 1.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1.Սույն պայմանագրով Վարձատուն պարտավորվում է վճարի դիմաց Վարձակալի ժամանակավոր տիրաօետմանը և օգտագործմանը հանձնել ոչ բնակելի տարածք ՀՀ Պաշտպանական մարզատեխնիկական ընկերության հասարակական կազմակերպության պաշտպանության տան շենք երկրորդ հարկում գտնվող 99/հիննիսունինը/ ք.մ.,որը գտնվում է ՀՀ Լոռու մարզ ք.Ալավերդի Երևանյան խճուղի5/ հասցեում, այսուհետ՝ «ՕԲՅԵԿՏ»:

1.2.Օբյեկտը պատկանում է Վարձատուին սեփականության իրավունքով ինչը հաստատվում է՝անշարժ գույքի պետ.կադաստրի Ալավերդու կողմից 25.12.2006թ. տրված No 0274419 միասնական տեղեկանքով և Օբյեկտի սեփականության վկայանով:

1.3. Սույն պայմանագիրը գործում է 5/հինգ/ տարի ժամանակով:

1.4. Վարձատուն երաշխավորում է, որ Օբյեկտը վաճառված, գրավ դրված, ենթավարձակալության կամ անհատույց օգտագործման տրված կամ այլ կերպ ծանրաբեռնված չէ, վեճի առարկա չէ, արգելանքի տակ չի գտնվում:

1.5. Վարձակալության հանձնված Օբյեկտի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումն այլ անձի հիմք չէ սույն պայմանագիրը լուծելու կամ փոփոխելու համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Վարձատուն պարտավորվում է

2.1.1.Իրեն պատկանող տարածքը և գույքը հանձնել վարձակալին բարվոք վիճակում:

2.1.2. Վարձակալին ապահովել նորմալ աշխատանքային պայմաններով, համապատասխան տեղում թույլատրել տեղադրելու վարձակալի կազմակերպության ցուցանակը:

2.1.3. Թույլատրել վարձակալին օգտվելու վարձատուի կոմունալ ծառայություններից:

2.2. Վարձակալը պարտավոր է՝

2.2.1. Ապահովել տարածքի կոմունալ և այլ ծառայությունների անխափան աշխատանքը և տարածքի հետ կապված այլ կոմպլեքսային աշխատանքների կատարումը:

2.2.2. Իրեն հանձնված տարածքն ու գույքը օգտագործել նպատակային և պայմանագրի ժամկետը լրանալուց հետո վերադարձնել այն վարձատուին բարվոք վիճակում:

2.2.3. Իր հաշվին հոգալ կոմունալ սպասարկման բոլոր ծախսերը այդ թվում՝ հեռախոսի, էլեկտրոէներգիայի:

2.2.4. Պայմանագրի ժամկետը լրանալուց հետո 5-օրյա ժամկետում ազատել զբաղեցրած տարածքը և այն հանձնել վարձատուին, որի վերաբերյալ կազմվում է համապատասխան հանձնման- ընդունման ակտ:

2.2.5. Ապահովել իր զբաղեցրած տարածքի և շինությանը հարող ընդհանուր օգտագործման տարածքի հակահրդեհային, սանիտարական պատշաճ վիճակը և ճարտարապետական տեսքը:

2.2.6. Իր մեղքով վարձակալած տարածքին հասցված վնասը վերականգնել սեփական միջոցներով:

2.2.7. Վարձավճարը սույն պայմանագրով սահմանված ժամկետներում չվճարելու կամ վճարումն ուշացնելու դեպքում վճարել տույժ, ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար չվճարված գումարի 0,5%- ի չափով:

## 3.ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

3.1. Վարձատուն իրավունք ունի՝
3.1.1. Վարձակալից պահանջել տարածքն օգտագործելու կանոնների պահպանում:
3.1.2. Վարձակալից պահանջել վարձավճարի ժամանակին վճարում:
3.1.3. Պայմանագրի ժամկետը լրանալուց հետո ազատել զբաղեցրած տարածքը:
3.1.4. Վարձակալման պայմանագիրն առանց նախազգուշացման վաղաժամկետ դադարեցնել, եթե վարձակալը 2 ամսից ավելի չի վճարում տարածքի սույն պայմանագրով սահմանված վարձը և կոմունալ-կենցաղային վարձավճարները (իր կողմից օգտագործված):
3.2. Վարձակալն իրավունք ունի՝
3.2.1. Վարձակալած տարածքում կատարել շինմոնտաժային աշխատանքներ միայն վարձատուի գրավոր համաձայնությամբ՝ այդ մասին կազմելով լրացուցիչ համաձայնագիր:
3.2.2. Միակողմանիորեն դադարեցնել սույ պայմանագիրը՝ այդ մասին նախօրոք 2 ամիս առաջ գրավոր տեղյակ պահելով վարձատուին:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ԿԱՏԱՐՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԸ ԵՎ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԸ

4.1.Օբյեկտի ամսեկան վարձավճարը սահմանել 49500 (քառասունինը հազար հինգ հարյուր)դրամ :Վարձակալը վարձատուին վճարում է վարձավճարը յուրաքանչյուր ամսին հաջորդող 25-ը :
4.2.Վարձավճարը սկսվում է հաշվարկվել երկու հազար յոթ թվականին հունվարի մեկից :

## 5. ԼՐԱՑՈՒՑԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5.1.Պայմանագրի գործողության ընթացքում առաջացած վեճերը ենթակա են լուծման օրենքով սահմանված կարգով:
5.2. Պայմանագրի գործողության ընթացքում առաջացած հարկային պարտավորությունները կողմերը կատարում են ինքնուրույն:
5.3. Տարածքը ենթավարձակալության տալն արգելված է:
5.4. Պայմանագրին պարտադիր կցվում են.
5.4.1. Տարածքը վարձակալին հանձնման-ընդունման ակտը :
5.5. Պայմանագիրը կնքված է համարվում կողմերի ստորագրման պահից:
5.6. Պայմանագիրը կնքված է 5 տարի ժամկետով 01.01.2007 թվականից մինչև 01.01.2012 թիվը:

## 6. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

-Սույն պայամանագիրը կնքված է հայերեն լեզվով, չորս օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Առաջին օրինակը պահվում է Թումանյանի տարածքային նոտարական գրասենյակում, իսկ մյուսները տրվում են կողմերին:
-Պայմանագիրը երեսուն օրվա ընթացքում ենթակա է գրանցման
անշարժ գույքի պետական կադաստրի Ալավերդու ստորաբաժանումում:

ՎԱՐՁԱՏՈՒ՝

ՎԱՐՁԱԿԱԼ՝

Երկու հազար յոթ թվականի սեպտեմբերի քսանչորսին սույն պայմանագիրը նոտարական կարգով վավերացվում է իմ՝ Թումանայնաի տարածքային նոտար Սամվել Մայիլյանի կողմից:
Կողմերի պայմանագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: Ստուգված է կողմերի ինքնությունը և իրավունակությունը, ինչպես նաև իրավաբանական անձի իրավունակությունը և նրա ներկայացուցիչների լիազորությունները:
Գրանցված է սեղանամատյանում թիվ 1990
Գանձված է պետական տուրք և ծառայության վճար համաձայն ՀՀ «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» օրենքների

ՆՈՏԱՐ՝ Ս. Հ. ՄԱՅԻԼՅԱՆ

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

**Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին**
**ՀՀ,ք.Ալավերդի,երկու հազար տասնմեկ թվականի մարտի տասնչորսին**

Մի կողմից՝ գույքի սեփականատեր ՝ ՀՀ Պաշտպանական մարզատեխնիկական հասարակական կազմակերպության Կենտրոնական խորհուրդը (ՀՀ ք.Երևան, Արշակունյաց պողոտա 5), ի դեմս խորհրդի նախագահ Գեներալ-Մայոր Ա. Թադևոսյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության համաձայն, այսուհետև <<Վարձատու>>, որի անունից 11.03.2011թ. տրված N 02/26 լիազորագրով հանդես է գալիս <<Թումանյանի Հայրենասեր>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (ՀՀ ք.Ալավերդի, Երևանյան խճուղի 5), ի դեմս տնօրեն Արարատ Աշոտի Բոշյանի, անձնագիր AF 0486789, տրված 27.11.2001թ., 055 ՆԳԲ, բնակվող ՀՀ Լոռու մարզի գ.Շնողում, մյուս կողմից՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը (ՀՀ ք.Երևան, կառավարական 3-րդ շենք), ի դեմս աշխատակազմի ղեկավար Ա. Գրիգորյանի, որը գործում է նախարարության կանոնադրության համաձայն, այսուհետ <<Վարձակալ>>, որի անունից 11.03.2011թ. տրված N 23 լիազորագրով հանդես է գալիս <<Զբաղվածության պետական ծառայություն>> գործակալության Ալավերդու զբաղվածության տարածքային կենտրոնի տնօրեն Նունե Վրթանեսի Անտաշյանը, որը գործում է կենտրոնի կանոնադրության համաձայն, անձնագիր AE 0383159, տրված 23.04.1999թ., 055 ՆԳԲ, բնակվող ՀՀ ք.Ալավերդի, Կոմսոմոլի 117,միմյանց միջև կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1.ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1.Հետագա համագործակցության նպատակով Կողմերը որոշել են երկու հազար յոթ թվականի սեպտեմբերի 24-ին կնքված <<Ոչ բնակելի տարածքի վարձակալության >> N1990 պայմանագրում մտցնել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1.1.1. <<4. ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ԿԱՏԱՐՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԸ ԵՎ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԸ>> գլխի 4.1. կետում <<49500 (քառասունինը հազար հինգ հարյուր)>> արտահայտությունը փոխարինել <<69300 (վաթսունինը հազար երեք հարյուր)>> արտահայտությամբ:

1.1.2. <<5. ԼՐԱՑՈՒՑԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ>> գլխի 5.6. կետում <<01.01.2007 թվականից մինչև 01.01.2012 թիվը>> արտահայտությունը փոխարինել <<01.01.2007 թվականից մինչև 01.01.2016 թիվը>> արտահայտությամբ:

1.1.3. Սույն համաձայնագրով սահմանված կողմերի 01.01.2007 թվականի իրավունքներն ու պարտավորությունները կողմերի վրա տարածվում են 2011 թվականի հունվարի 1-ից:

1.1.4. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման և կնքման պահից և հանդիսանում է կողմերի միջև 2007 թվականի սեպտեմբերի 24-ին կնքված <<Ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագրի >>անբաժանելի մասը:

## 2.ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

2.1.Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի միջև ստորագրելու, նոտարական վավերացման և պետական գրանցման պահից:

2.2.Կողմերի միջև ձեռք բերված՝ սույն Համաձայնագրին հակասող բոլոր նախկին պայմանավորվածությունները ՝ սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու պահից դադարում են գործել:

2.3. Սույն Համաձայնագրի և Պայմանագրի դրույթների միջև հակասություններ ծագելու դեպքում կիրառվում է սույն Համաձայնագիրը:

## 3.ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

3.1.Սույն Համաձայնագիրը կարող է փոփոխվել կամ լրացվել կողմերի համաձայնությամբ:

3.2.Կողմերի պատասխանատվությունը որոշվում է Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությանը համապատասխան:

3.3.Սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից համարվում է Պայմանագրի անբաժանելի մասը:

3.4.Սույն Համաձայնագրի, ինչպես նաև Պայմանգրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է դատարինի քննությանը:

3.5.Սույն Համաձայնագիրը կազմված է հայերեն լեզվով չորս օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբաբական ուժ: Առաջին օրինակը պահվում է Թումանայնի տարածքային նոտարական գրասենյկակում, իսկ մյուսները տրվում են կողմերին;

3.6. Սույն Համաձայնագիրը երեսուն օրվա ընթացքում ենթակա է գրանցման ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Ալավերդու տարածքային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՁԱՅՆՈՂՆԵՐ՝

1 Ջոնսոն Գրիգորի Հովհաննիսյան

2. Արարատ Հայրի Բաղրամ

Երկու հազար տասնմեկ թվականի մարտի տասնչորսի սույն համաձայնագիրը նոտարական կարգով վավերացվում է իմ՝ Թումանյանի տարածքային նոտար Սամվել Մայիլյանիս կողմից:

Կողմերը Համաձայնագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ:

Ստուգված է կողմերի ինքնությունը և հորինունակությունը:

Գրանցված է սեղանամատյանում թիվ 359

Գանձված է պետական տուրք և ծառայության վճար համաձայն ՀՀ <<Պետական տուրքի մասին >> և <<Նոտարիատի մասին>> օրենքների:

ՆՈՏԱՐ՝ Ս.Հ. ՄԱՅԻԼՅԱՆ